ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Աշակերտների ներգրավվածության ապահովումը քննադատական մտածողություն մեթոդով:

Անցկացման վայր՝ Ներքին Գետաշեն

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Մանիկ Մկրտչյան

Դպրոց՝ Ն. Գետաշեն գյուղի Ա.Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց

Բովանդակություն

1.Ներածություն……..3

2.Գրական ակնարկ……..7

3.Փորձարարական հետազոտություն……9

3.1.Խմբի նկարագիրը……9

3.2.Փորձարարական դասեր……10

3.2.1.Փորձարարական դաս-1……..10

3.3.2.Փորձարարական դաս2……...……11

4.Վերլուծություն……
…12

5.Գրականության ցանկ……....…13

1.Դասապլան-1 ……14

2.Դասապլան-2 ……17

Ներածություն

«Հայոց պատմություն» առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվելու է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդի և հայոց պետականության դերը Համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացի:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի ընթացքում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Պատմության ուսմնասիրումը հիմք է յուրաքանչյուր քաղաքացու հասարակության և պետության ապագա գործունեության: Հայոց պատմության իմացության միջոցով է ձևավորվում ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունն, պատասխանատու և սեփական տեսակետն ու դիրքորոշումը ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող, ազգային արժեհամակարգը կրող անձ ու քաղաքացի:

Հիմանական դպրոցում սողովորողները Հայոց պատմության ծրագրի շրջանակներում կծանոթանան հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի ունեցած դժվարություններին ու կորուստներին: Հանրակրթական միջին դպրոցի «Հայոց պատմություն» առարկայի ծրագրի կազմման հիմքում դրվել է գծային մոդելը, պահպանված է ժամանակագրական հաջորդականության սկզբունքը: Ավագ դպրոցում Հայոց պատմության ծրագրի կազման հիմքում շեշտը դրվել է արդի աշխարհում առկա խնդրահարույց թեմաների ուսումնասիրության՝ դրանց պատճառահետևանքային կապերի վեր հանման և քննադատական վերլուծության մեթոդի վրա:

Պատմության հետազոտման վերոնշյալ սկզբունքները կնպաստեն սովորողի կողմից պատմության համակողմանի ուսումնասիրմանը, պատմական գործընթացների և դերակատարների ամբողջական

ընկալմանը, ինչն էլ կնպաստի լայն մտահորիզոն և քննադատական մտածողություն ունեցող անձի ձևավորմանը: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիարակչական մի շարք կարևոր խնդիրներ՝

Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակներն ընդգրկող հայոց պատմության ամբողջական գիտելիքներով, որոնց միջով կարմիր թելի պես պետք է անցնեն ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը և դրանց վերաբերող փաստերը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից: Հայոց պատմության խոր և համակողմանի իմացությունը կօգնի մեր հանրապետության ապագա քաղաքացիներին կապվելու մայր հողին, տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:

Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները, որոնք օրինակ կդառնան սովորողների համար, կոգեշնչեն նրանց և կմղեն հայրենիքին անմնացորդ նվիրվելու գործին:

Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային արժեքների ու համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, ժողովրդի հանճարով ստեղծված պատմամշակութային կոթողներին կձևավորի ազգային և համամարդկային մշակույթի ժառանգորդի, պահպանողի ու հարստացնողի գիտակցություն, կվեհացնի սովորողների ոգին, սեր կառաջացնի գեղեցիկի նկատմամբ, կօգնի գեղեցիկը տեսնելուն, զգալուն և վերապրելուն, կսովորեցնի կապվել իր նախնիների գեղագիտական ու ստեղծագործական ավանդներին:

1. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը, վեր հանել շինարարական տաղանդի ու արարումների լավագույն դրսևորումները: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:Դաստիարակել մարդկային- բարոյական այնպիսի որակներ ու արժանիքներ, ինչպիսիք են բարությունը, ազնվությունը, մաքրությունը, անկեղծությունը, համբերատարությունը և համագործակցությունը:
2. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի,

ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները, ինչպես են կառուցել, ընտանիք կազմել, սնվել ու հագնվել, ուրախացել ու տխրել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:Ազգային կենարար արմատներից սնվելը կօգնի նրանց ավելի ուժեղ ու ամուր կանգնել հայրենի հողի վրա, զգալ հայրենիքի ուժն ու զորությունը:

3. Բացահայտել պատմամշակութային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Տալ նրանց համակողմանի բնութագիրը և մարդկային նկարագիրը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային- հասարակական ձգտումներն ու իդեալները:

4. Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից, կարծիքների ու տեսակետների, մտքերի ու գաղափարների բախումից:

5. Դաստիարակել ջերմ հայրենասիրություն« ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում:Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակում ծառայելը պատվի գործ է: Դաստիարակել հայրենիքին նվիրվելու, այն կյանքի գնով պաշտպանելու կամք ու վճռականություն:

6. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակութային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը: Ցույց տալ հայ ժողովրդի տեղն ու խաղացած դերը քաղաքակիրթ աշխարհում:

7. Հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

8. Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

9. Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների, ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք և կարողություն:

10. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ

հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ: Առաջ բերել մարդկության առջև ծառացած հիմնահարցերի լուծման գործում իրենց ավանդն ունենալու ձգտում և ցանկություն:

11. Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունե-ության կարողությունները և հմտությունները:

ա. խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքները ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները:

բ. սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու, ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվելու, անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու, վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ:

գ. ձևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, համադրելու, վերլուծելու, գնահատելու, վերացարկելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողություններ:

դ. զարգացնել ուսումնառության ընթացքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու, անցյալի, ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողությունները և հմտությունները:

ե. զարգացնել սովորողների զգայական ընկալման, մտավոր և հուզական ճանաչողության բոլոր տեսակները և կամային որակները՝ լսողություն, տեսողություն, ուշադրություն, հիշողություն, կամք, համառություն, հույզեր, մտավոր գործողություններ՝ համեմատում, համադրում, ընդհանրացում, համակարգում և այլն:

Հետազոտական աշխատանքի թեման ընտրված է հետևյալ նպատակադրմամբ, որպեսզի ուսումնասիրեմ ժամանակակից մեթոդները և դրանք իրականացնեմ դասապրոցեսի ընթացքում: Կրթության նպատակն է իրականացնելու արդյունավետ ուսուցում, այդ իսկ պատճառով էլ կարևոր նշանակություն ունի ուսուցման մեթոդների ընտրությունը: Հետազոտական աշխատանքը իրականացնելու համար նախընտրել եմ «Աշակերտների ներգրավվածության ապահովումը քննադատական մտածողություն մեթոդով» թեմայով:

Գրական ակնարկ

Սույն աշխատանքում ընդգծվում է աշակերտների քննադատական մտածողության հմտությունների զարգացման կարևորությունը պատմության դասավանդման ընթացքում: Որպես ներգործության միջոց առաձնացվում է հարցադրումներով իրականացվող ուսումնառությունը: Այն կոգնի բացահայտել պատմական փաստերի և երևույթների պատճառահետևանքային կապերը, կզարգացնի դրանք գնահատելու կարողությունը՝ ձևավորելով փոխանցելի հմտություններ:

Սույն աշխատանքի նպատակն է առաջարկել միջոցներ աշակերտների պատճառահետևանքային կապերը վերլուծելու, փաստերն ու երևույթները գնահատելու հմտության զարգացման համար, որոնք ինքնին քննադատական և պատմական մտածողության մաս են կազմում: Առաջադրված վարկածն է բաց հարցերի միջոցով իրականացվող ուսումնառությունը կարող է նպաստել նշյալ հմտությունների զարգացմանը: Մեր խնդիրն է սովորեցնել առարկայորեն մտածել և առարկայի միջոցով ձևավորել ՔՄ որոշակի փոխանցելի հմտություններ: Մանկավարժական գործունեության ընթացքում իմ ուշադրության առանցքում մշտապես եղել է աշակերտների ստեղծագործական և քննադատակա մտածողության հմտությունների զարգացումը: Դասաապրոցեսի ընթացքում աշակերտների կողմից իրականացված տարաբնույթ առաջադրանքները ցույց տվեցին, որ շատ ավելի բարձր արդյունքներ են արձանագրվում այնպիսի առաջադրանքներ կատարելիս որոնք ենթադրում են փաստական նյութի չեզոք վերարտադրություն, ավելի հեշտությամբ են պատասխանում այն հարցերին, որոնք ենթադրում են պատմական այս կամ այն փաստի, երևույթի իմացություն: Սակայան դժվարությամբ են համադրում փաստերը, գտնում պատմական երևույթների միջև առկա կապերը, վերլուծում երևույթների պատճառներն ու հետևանքները: Շատ դեպքերում աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակտը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները: Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ:

ՔՄ-ն մի համակարգ է, որն օգտագործվում է փաստերի ու իրադարձությունների վերլուծության համար և հնարավորություն է տալիս փաստարկված եզրակացություններ անել մեկնաբանել և ստացված արդյունքները կիրառել նման այլ իրավիճակներում: «Քննադատական» բառը իր մեջ գնահատողական բաղադրիչ է պարունակում: Երբեմն այդ բառի ներքո ինչ-որ բացասական երանգ է փոխանցվում: Բայց գնահատականը պետք է լինի կառուցողական արտահայտելով և՛ դրական և՛ բացասական վերաբերմունք: Որպես քննադատական մտածողության դրսևորումներ՝ մենք կարևորում ենք պատճառահետևանքային կապերի վերլուծության, փաստերն ու երևույթները գնահատելու կարողությունները: Նախընտրելի է կիրառել բաց հարցադրումների հետևյալ տեսակները՝ **Ինչու՞, Ի՞նչ հետևանքների է հանգեցնում, Ինչպե՞ս եք գնահատում**... :

Այս երեք հարցերի միջոցով կառուցվում է պատճառահետևանքային կապերի տրամաբանական ամբողջական մեկ շղթա: Բաց հարցերը ունեն մի շարք առավելություններ փակ հարցերի նկատմամբ, դրանք թույլ են տալիս առանց որևէ սահմանափակման արտահայտել սեփական տեսակետը, առանձնացնել ամենաեականը, բարձրացնել այնպիսի խնդիրներ, որ անգամ հարցադրողի մտքով չի անցել, երևույթները ու փաստերը դիտարկել այլ տեսանկյունից:

Հարցադրումների միջոցով իրականացնվող ուսումնառությունը հնարավորություն կտա աշակերտին գտնել իրեն տրված հարցի պատասխանը՝ կիրառելով իր գիտելիքները, ունեցած տեղեկույթը, նաև առաջադրել հարցեր, գործի դնել սեփական աշխարահայացքը: Այս առումով բավական մեծ է ուսուցչի դերը: Նրա խնդիրն է ճիշտ ձևակերպված հարցերի միջոցով նպաստել աշակերտների մտածողության զարգացմանը: Պետք է ստեղծվի համապատասխան կրթական միջավայրը, որտեղ սովորողը չի խուսափում սեփական տեսակետն արտահայտելուց, գտնել օրինաչափությունները, սահմանել պատմական երևույթների և գործընթացների բնույթն ու նշանակությունը, պատրաստ է լսել և ընդունել կարծիքներ, որոնք կարող են և չհամընկնել իր տեսակետի հետ: Այս դեպքում աշակերտի խնդիրն է փաստարկված դատողութնունների միջոցով ապացուցել իր իրավացիությունը, կամ ընդունելով դիմացինի փաստարկները, փոփոխություններ կատարել իր դիրքորոշման մեջ: Գնահատելով տարբեր փաստեր ու երևույթներ աշակերտը քայլ առ քայլ սովորում է գնահատել իր իսկ գործունեությունը: Այս ամեն արդյունքում ձևավորվում են ավելի բարդ ճանաչողական հմտություններ:

3. Փորձարարական հետազոտություն

Փորձարարական հետազոտական խմբի նկարագիրը՝

Իմ հետազոտական աշխատանքը իրականացրել եմ Գեղարքունիքի մարզի Ն. Գետաշեն գյուղի Ա.Եղիազարյանի թիվ 2 միջին դպրոցում։ Հետազոտական աշխատանքներ իրականացրել եմ վերոնշյալ դպրոցի 7-րդ դասարանում, որտեղ սովորում են 25 աշակերտներ՝ 11 տղա և 14 աղջիկ։

Հայոց պատմության առարկան այդ դասարանում դասավանդում եմ շաբաթական 2 դասաժամով, դասացուցակով բաշխված է երկուշաբաթի օրը՝ 6-րդ դասաժամին և շաբաթ օրը՝ 2_րդ դասաժամին։

Դասարանում սովորում են և' ուժեղ և' թույլ ընդունակություններով օժտված երեխաներ, հետազոտական աշխատանքը իրականացնելիս ներգրավվել եմ 8 աշակերտների, որոնք ունեն կարողությունների և հմտությունների տարբեր մակարդակներ։

Աշակերտներից մեկը Ս.Մ-ն դժվարությամբ է վերհիշում և պատմում դասը մտքերը շարադրում է Կցկտուր։ Իսկ մյուս աշակերտները ՝ Բ. Մ-ն, Բ.Ա-ն, Հ.Տ-ն, Ղ.Ա-ն, Պ.Մ-ն ունեն ընդունակությունների միջին մակարդակ, Հայոց պատմության դասաժամից, գնահատվում են 5,6 երբեմն նաև 7։

Հետազոտության խմբին կցել եմ նաև դասարանի հարվածային աշակերտներից երկուսին՝ Հ.Մ -ին և Վ.Է-ին։ Վերոնշյալ դասարանում իմ հետազոտական աշխատանքը իրականացրել եմ 2022 թ. մարտի 5-ից։ Տվյալ դասարանում օրվա դասը « Բագրատունիների ենթակա հայոց թագավորությունները», թեման բավականին բարդ թեմա է, ուստի դասի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու և մոտիվացիան բարձրացնելու նպատակով իրականացրել եմ իմ նախընտրած « Քննադատական մտածողություն» մեթոդը։

Փորձարարական դասեր

Փորձարարական դաս-1

Այսօրվա դասի թեման էր «Բագրատունիների ենթակա հայոց թագավորությունները» (տե՛ս դասապլան էջ 14)։ Դասաժամն սկսեց տնային առաջադրանքի ստուգումով, բոլորը ներկայացրեցին իրենց տնային աշխատանքները՝ որոշակի սխալներով։ Քննարկվեց տնային առաջադրանքները, տրվեց բանավոր հետադարձ կապ։ Մտագրոհի միջոցով աշակերտները վերհիշեցի նախորդ թեման և պատասխանեցին տրված հարցերին։ Յուրաքանչյուր աշակերտի մոտ քննադատական մտածողությունը զարգացնելու համար անհրաժեշտ է իրականացնել հարցադրում և ճիշտ հարցադրման դեպքում աշակերտները կարողանան յուրացնել թեման, այն վերլուծել և ճիշտ գնահատել։ Այդ պատճառով էլ դասաժամը սկսեցինք նախորդ թեմայի՝ «Հայաստանի հզորացումը» հարցադրմամբ։ Աշակերտները պատասխանեցին առաջադրված հարցադրումներին իմ ուղղորդող հարցերի օգնությամբ։ Ապա դասը քննարկելուց և ամփոփելուց հետո, կարճ դասախոսությամբ ներկայացրի նոր թեման։ 8 միջին առաջադիմության տեր աշակերտների, որոնց նկատմամբ պետք է իրականացնեի հետազոտական աշխատանք, փորձեցի խոսքային մեթոդի միջոցով ստուգել նրանց գիտելիքները նոր թեմայից։

Քանի որ հետազոտվող աշակերտները միջին կարողությունների տեր են իմ հարցերին պատասխանեցին ոչ լիարժեք։ Նրանց տրվեց գրավոր և բանավոր հետադարձ կապ։ Աշակերտները գնահատվեցին և դասն ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով՝ նոր թեմայից գետերի մեջ դուրս գրել ժամանակագրությունը, նոր անունները և հասկացությունները ։

Փորձարարական դաս -2

Այսօրվա դասի թեման էր «Անիի թագավորության անկումը»։ Ստուգվեց տնային առաջադրանքները, ապա նախորոք մշակված հարցադրումների միջոցով անվանակոչված աշակերտներին տրվեցին հարցեր՝ բաց, փակ և հուշող բնույթի։ Նրանցից ոչ բոլորը կարողացան պատասխանել տրված հարցերին։ Թեման ավելի մատչելի դարձնելու համար հնչեցրեցրի հետադարձ և ուղղորդող հարցադրումներ և ավելի շատ թվով աշակերտներ ներգրավվեցին դասին և պատասխանեցին հարցերին։ Նախորդ դասին անդրադարձ կատարելու համար օգտագործեցի խոսքային մեթոդները՝ պատմել, դասախոսություն, զրույց, բանավեճ։ Զույկերի միջոցով իրականացրեցի այս մեթոդը և արդյունքում ստացվեց, որ բոլոր աշակերտները (այդ թվում հետազոտվող աշակերտները) կարողացան ճիշտ ընկալել թեման։ Հարցադրում կատարեցի անվանակոչված աշակերտներին և նրանք կարողացան ճիշտ ներկայացնել իրենց ընկալածը։ Կարճ դասախոսությամբ ներկայացրեցի նոր թեման։ Հարցադրումների միջոցով փորձեցի ստուգել աշակերտների գիտելիքները նոր թեմայից։ Գնահատեցի և' ակտիվ և' պասիվ աշակերտներին՝ ըստ իրենց գիտելիքների։ Դասը ավարտվեց տնային առաջադրանքի հանձնարարությունով՝ նոր թեմայից դուրս գրել ժամանակագրությունը, նոր անունները և հասկացությունները։

Վերլուծություն

Այսպիսով աշակերտների ներգրավածությունը ապահովելու համար պետք է կարևորել այն հանգամանքը, որ սովորողը մտածի պատմական և գիտության բովանդակության ու նշանակության մասին։ Փորձարարական դասերը փաստում են որ հնարավոր է ուսուցման միջոցով զարգացնել ՔՄ հմտություններ։Այդ նպատակով նախընտրելի է բաց փակ և հուշող հարցերի կիրառումը։ Դրանք մեծացնում են աշակերտի հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ։ Սովորողը փորձում է առաջադրված խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել։ Հանձնարարված թեմաների վերլուծության շնորհիվ աշակերտներիմոտ ձևավորվում են փոխանցելի հմտություններ, որոնք թույլ են տալիս նրանց ցանկացած իրավիճակում անել հիմնավորված եզրակացություններ, կանխատեսել հնարավոր հետևանքները, իսկ գնահատականիս լինել շրջահայաց, փաստերն ու դրույթները դիտարկել տարբեր տեսանկյուններից և չշտապել դատողություններ անելիս։ Այսպիսով ՔՄ զարգացնելու համար կարևոր նշանակություն ունի՝

1.տարաբնույթ տարբերակված վարժություններ կատարում տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների համար։

2. Հարցադրումների խոսքային մեթոդների և մտագրոհի մեթոդների կիրառումը դասաժամերին։

3. Գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում։

4. Թեմայի հիշեցում ամրապնդում և ամփոփում՝ անհատական գրավոր աշխատանքների միջոցով։

5. Համացանցից լրացուցիչ նյութերի ուսումնասիրությունը։

Գրականության ցանկ

1. https://www.academia.edu/43994858/%D5%94%D5%86%D5%86%D4%B1%D4%B4%D4%B1%D5%8F%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86_%D4%B5%D5%8E_%D5%8D%D5%8F%D4%B5%D5%82%D4%BE%D4%B1%D4%B3%D5%88%D5%90%D4%BE%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86_%D5%84%D5%8F%D4%B1%D4%BE%D5%88%D5%82%D5%88%D5%92%D4%B9%D5%85%D5%88%D5%92%D5%86_%D5%84%D4%B1%D5%8D%D5%86%D4%B1%D4%BF%D5%91%D4%B1%D5%85%D4%BB%D5%86_%D5%84%D5%87%D4%B1%D4%BF%D5%88%D5%92%D5%85%D4%B9_%D4%B5%D5%8E_%D5%94%D4%B1%D5%82%D4%B1%D5%94%D4%B1%D5%91%D4%BB%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86_%D5%80%D4%B1%D5%84%D4%B5%D5%90%D4%B1%D5%87%D4%BD%D5%88%D5%92%D4%B9%D5%85%D5%88%D5%92%D5%86
2. https://www.vsu.am/grqer/2018/bprak/xukasyanasya.pdf
3. https://kznakhimnadram.blogspot.com/p/blog-page_16.html https://www.vsu.am/grqer/2018/bprak/xukasyanasya.pdf

Ն. Գետաշեն գյուղի Ա.Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց

Դասապլան 1

Ուսուցիչ ՝ Մ.Մկրտչյան

Առարկա	Հ. պատմություն	Ամսաթիվ 05.03.2022թ.	Կիսամյակ	2	Դասարան	7
Թեմա՝	Բագրատունիների ենթակա հայոց թագավորությունները					
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, կավիճ գրատախտակ, աշխատանքային տետր					
Դասի նպատակը՝	• Ձեռք բերել գիտելիքներ Մեծ Հայքում Բագրատունիներն ենթակա թագավորությունների մասին: • Կարևորել այդ թագավորությունների տեղն ու դերը Հայոց պատմության մեջ: • Զնավորել և զարգացնել վերլուծական քննադատական մտածողությունը:					
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտը կարողանա ՝ • Ներակայացել և համեմատել տվյալ ժամանակաշրջանի պատմական մարդու փաստերն ու երույթները: • Համեմատել Բագրատունիներին ենթակա հայոց թագավորների գործունեությունը և կատարել եզրակացություն: • Գնահատել և արժևորել այդ թագավորություններից ամենա հզորին:					
Գործունեությունները (ժամ/տեսողություն)	Ուսումնական գործունեություն աշակերտներ	Ուսումնական գործունեություն և ուսուցիչ	Հարցադրումներ		Կիրառվող մեթոդ(ներ)	

Մուտք ներկա բացակա (3 րոպե) Խթանում (5-7րոպե)	Աշակերտները լսում են մտածում են հիշում են նախորդ թեմաները և պատասխանում են հարցերին։	Ուսուցիչը մտագրոհի է անում հարցերի միջոցով, փորձում է հիշեցնել նախորդ թեմաները և լսում է աշակերտների պատասխանները։	Ինչ անհասկանալի հարցեր ունեն նախորդ դասից։	Մտագրոհի հարցադրումների մեթոդ, զրույց։
Իմաստի ընկալում (20րոպե)։	Հարցերին պատասխանում են անվանակոչված աշակերտները։	Ուսուցիչը համառոտ դասախոսությամբ ներկայացնել նոր ուսուցանվող դասը, այնուհետև հարցերի միջոցով ստուգել անվանակոչված աշակերտների գիտելիքները նոր դասանյութի վերաբերյալ։	1. Երբ անցում կատարվեց վաղ միջնադարից միջին միջնադարին։ 2. Ովքեր էին իշխանները։ 3. Ինչու էին նրանք ձգտում անջատվել կենտրոնական թագավորական իշխանությունից։ 4. Երբ է մասնատվել Բագրատունյանց թագավորությունը։ 5. Ներկայացնել Բագրատունիներին ենթակա մանր թագավորությունները։	

Կշռադատում (10րոպե)	Աշակերտները լիարժեք ընկալում են, դասի բոլոր հարցադրումները և հիմնական գաղափարները։	Ուսուցիչը այս փուլում ամրապնդում և ամբողջացնում է հիմնական գաղափարները։	Ինչու ձևավորվեցին ենթակա թագավորությունները։	
Տնային աշխատանք (5րոպե)	Դասից դուրս բերել նոր անունները և հասկացությունները։ Գրել ժամանակագրությունը։			

Անդրադարձ

Հետազոտվող աշակերտները սկզբնական հարցերին դժվարությամբ պատասխանեցին, իսկ առաջադիմությամբ աչքի ընկած աշակերտները պատասխանում էին լիարժեք։

Ն. Գետաշեն գյուղի Ա.Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց

Դասապլան 2

Ուսուցիչ ՝ Մ.Մկրտչյան

Առարկա	Հ. պատմություն	Ամսաթիվ 07.03.2022թ.	Կիսամյակ	2	Դասարան	7
Թեմա՝	Անիի թագավորություն անկումը;					
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, կավիճ գրատախտակ, աշխատանքային տետր, ատլաս:					
Դասի նպատակը՝	• Իմանա «Ամոթալի կտակ»-իէությունը: • Իմանա Անիի թագավորության անկման պատճառները: • Իմանա Անիի անկման հետևանքերը: • Գնահատի Գագիկ II-ի գործունեությունը:					
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտը կարողանա ՝ • արտահայտել իր կարծիքը «Ամոթալի կտակ»-ի մասին: • Եզրակացություն անել Անիի թագավորության անկման պատճառների և հետևանքների մասին: • Գնահատական տալ Հովհաննես- Սմբատի և Պետրոս Գետադարձի վարմունքի մասին:					
Գործունեությունն	Ուսումնական	Ուսումնական	Հարցադրումներ	Կիրառվող		

ր (ժամ/տեսողություն)	գործունեություն աշակերտներ	գործունեություն և ուսուցիչ		մեթոդ(ներ)
Մուտք ներկա-բացակա (3 րոպե)				
Խթանում (7-10 րոպե)։	Աշակերտները փորձում են մտածել և վերհիշել նախորդ թեմաները և պատասխանելուսուցչի հարցերին։ Թերթիկների վրա ներկայացնում են իրենց աշխատանքները(տրված հարցերի պատասխանները)։	Ուսուցիչը հարցադրումների միջոցով, հիշեցնում է նախորդ թեման և լսում է աշակերտների պատասխանները, ստուգում թերթիկները և տալիս է գրավոր և բանավոր հետադարձ կապ։	Ինչ անհասկանալի հարցեր ունեն նախորդ դասից։	Հարցադրումների մեթոդ, խմբավորման մեթոդ, խոսքային մեթոդ, զրույց։

Իմաստի ընկալում (20 րոպե)։	Հարցերին պատասխանում են անվանակոչված աշակերտները։	Կարճ դասախոսությամբ ներկայացնել նոր դասանյութը, միջառարկայական կապ ստեղծել Համաշխարհային պատմության հետ՝ Բյուզանդիայի թեման և զրույցի ու հարցադրումների միջոցով ստուգել անվանակոչված աշակերտների գիտելիքները նոր դասանյութի վերաբերյալ։։	1. Ո՞րոնք էին Անիի թագավորության անկման պատճառները։ 2. Հայաստանի ո՞ր տարածքները նվաճեց Բյուզանդիան X դարի 2-րդ կեսին և XI դարի սկզբին։ 3. Գագիկ I –ի ժառանգների միջև պայքարը ինչպես կարգավորվեց։ 4. Ինչ էր իրենից ներկայացնում «Ամոթալի կտակ»-ը։	
Կշռադատում (10րոպե)	Աշակերտները լիարժեք ընկալում են, դասի բոլոր հարցադրումները և հիմնական գաղափարները։	Ուսուցիչը այս փուլում ամրապնդում և ամբողջացնում է հիմնական գաղափարները։	Ե՞րբ և ի՞նչպես անկում ապրեց Անիի թագավորությունը։	
Տնային աշխատանք	Դասից դուրս բերել նոր անունները և հասկացությունները։ Գրել			

(2 բոպե)	ժամանակագրությունը:

Անդրադարձ

Հետազոտվող աշակերտները սկզբնական հարցերին դժվարությամբ պատասխանեցին, իսկ առաջադիմությամբ աչքի ընկած աշակերտները պատասխանում էին լիարժեք: Խոսքային մեթոդի կիրառման ժամանակ բավականին ակտիվ էին, սակայն թույլ տվեցին որոշ սխալներ: